**ՏԵՂԵԿԱՆՔ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 19. Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը**

***(վերնագիրը լրաց. 10.12.21 ՀՕ-378-Ն)***

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | | |
|---|---|---|
| 15.5 Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար՝<br>- անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով | |
| | - անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի չորսից ավելի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| | - անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայություն կազմակերպելու համար՝ տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| «-վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեություն իրականացնելու համար՝ տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով» |

**Հոդված 20. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | |
|---|---|
| «59. Վտանգավոր բեռներ փոխադրելու վարորդի մասնագիտական վերապատրաստման վկայական տալու համար՝ | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 60. Վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման բննություններ հանձնելու համար՝ | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 61. Վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության մասնագետի մասնագիտական վերապատրաստման վկայական տալու համար՝ | բազային տուրքի 40-ապատիկի չափով: |
| 62. Վտանգավոր բեռներ փոխադրելու տրանսպորտային միջոցի հաստատման վկայական տալու համար՝ | բազային տուրքի 10-պատիկի չափով»: |